ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1212-Ա	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	01.11.2018
Ստորագրող մարմինը	Վարչապետի պաշտոնակատար	*Ստորագրման ամսաթիվը*	05.11.2018
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	06.11.2018	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1731-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 նոյեմբերի 2018 թվականի N 1212-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1731-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք հանձնելու մասին» N 1731-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետում՝

ա. «կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին» բառերը փոխարինել «տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին» բառերով,

բ. «քառամյա» բառը փոխարինել «տասնամյա» բառով.

2) որոշման N 1 հավելվածում՝

ա. 2-րդ կետի «Գտնվելու վայրը» սյունակում «ՀՀ Արմավիրի մարզ, գ. Մայիսյան» բառերը փոխարինել «ՀՀ Արմավիրի մարզ, քաղ. Արմավիր, Երևանյան փող., N 2/12» բառերով,

բ. 3-րդ կետի «Հողամասի մակերեսը (հա)» սյունակում «0,1463» թիվը փոխարինել «0,12574» թվով,

գ. ուժը կորցրած ճանաչել 7-րդ կետը.

3) ուժը կորցրած ճանաչել որոշման N 2 հավելվածի 7-րդ կետը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի պաշտոնակատար

Ն. Փաշինյան

2018 թ. նոյեմբերի 5
Երևան